Աննա Բաբուշյան

Վերածնունդ

Թե ողջ աշխարհն ոտնատակ անեմ՝

Այնտեղ թաքնված զանձերը պեղեմ,

Իմ անգինն էլի դու ես հայրենիք

Աշխարհի միակ բաց հրաշալիք:

Թե օտար հողը ոսկի էլ հագնի

Թե ոտքերիս տակ դրախտ ծաղկեցնի,

Հողիդ ճաք տված սիրտը վիրավոր

Ինձ տուն կկանչի աղոթքով հզոր:

Մի պտղունցն անգամ հողիդ չեմ փոխի

Օտարի սնած դրախտների հետ

Սերդ ոտքերն իմ ամուր կկապի

Որ չհամբուրվեն օտար հողի հետ:

Դու իմ դրախտն ես գունեղ մանկության

Առաջին սերն իմ պատանեկության,

Դու հզոր կանչն ես իմ թանկ հուշերի

Փթթի'ր այսուհետ, հող ի'մ հայրենի ....

23.01.2025

ԱԽՈՒՐՅԱՆ